RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՄԱՍ - 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019-2020 թթ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Ընդհանուր կապիտալ 4
- Կանոնադրական կապիտալ 6
- Կուտակված շահույթ (վնաս) 7
- Վերագնահատման պահուստներ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծել Հայաստանի բանկային համակարգի 2019 և 2020 թվականների ընդհանուր կապիտալը՝ ըստ բանկերի և կապիտալի տարրերի.

- Կանոնադրական կապիտալ (ներառյալ էմիսիոն եկամուտը)
- Կուտակված շահույթ / վնաս (ներառյալ գլխավոր պահուստը)
- Վերագնահատման պահուստ (հիմնական միջոցների և ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստներ)

Հետազոտության հիմք են հանդիսացել Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները:

Ընդհանուր կապիտալ

- 2020 թվականի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր պահուստը աճել է **61 մլրդ ՀՀ դրամով**, կամ **7.3%** (834 մլրդ ՀՀ դրամից մինչև 895 ՀՀ դրամ):
- Ընդհանուր կապիտալը բաղկացած է հետևյալ **3** տարրերից (կանոնադրական կապիտալ, կուտակված շահույթ/վնաս և վերագնահատման պահուստ):
- Հետևյալ **4** բանկերը հիմնադրվել են օտարերկրյա բանկերի կողմից (Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, ՎՏԲ-Հայաստան Բանկ, Բիբլոս Բանկ Արմենիա և Մելլաթ բանկ):



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.12.2020թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **60%**-ը և հավասար է **534 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2020թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **35%**-ը և հավասար է **317** մլրդ ՀՀ դրամ:
- Առ 31.12.2020թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **5%**-ը և հավասար են **44** մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.12.2020



Կանոնադրական կապիտալ

- Սույն վերլուծության համար ավելի նպատակահարմար է կանոնադրական կապիտալը դիտարկել էմիսիոն եկամտի հետ միասին:
- 2020 թվականի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **8.3 մլրդ ՀՀ դրամով**, կամ **1.6%** (**525.3** մլրդ ՀՀ դրամից մինչև **533.5** ՀՀ դրամ):
- Հետևյալ բանկերը ավելացրել են իրենց կանոնադրական կապիտալը 2020թ. ընթացքում.

1. Կոնվերս Բանկ	3,531 մլն ՀՀ դրամ
2. ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	2,080 մլն ՀՀ դրամ
3. Էվոկաբանկ	2,050 մլն ՀՀ դրամ
4. ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	501 մլն ՀՀ դրամ
5. Ամերիաբանկ	95 մլն ՀՀ դրամ



Կուտակված շահույթ (վնաս)

- Սույն վերլուծության համար ավելի նպատակահարմար է կուտակված շահույթը/վնասը դիտարկել գլխավոր պահուստի հետ միասին:
- 2020 թվականի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **59.6 մլրդ ՀՀ դրամով**, կամ **23%** (**257.7** մլրդ ՀՀ դրամից մինչև **317.3** ՀՀ դրամ):
- Բացի ՎՏԲ-Հայաստան բանկից մնացած բանկերը ունեն կուտակված շահույթ:
- 2020 թվականի ընթացքում 8 բանկ հայտարարել են դիվիդենտների վճարման մասին, ընդամենը **10.1 մլրդ ՀՀ** դրամի չափով:



Վերագնահատման պահուստներ

- Վերագնահատման պահուստները հիմնականում բաղկացած են հիմնական միջոցների և ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստներից:
- 2020 թվականի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի վերագնահատման պահուստները նվազել են **6.8 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13%** (**51.2** մլրդ ՀՀ դրամից մինչև **44.4** ՀՀ դրամ):
- Նվազումը հիմնականում պայմանավորված է պետական պարտատոմսերի կորի փոփոխությամբ:



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (Արմենիա Մարիոթ Հյուրանոց,
գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09

Էլ. հասցե՝ info@rumels.am

Կայք՝ www.rumels.am